ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28/02/2020

ՈՐՈՇՈՒՄ N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ>> ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԱԳԱ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀՕրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիների դիմում-խնդրանքները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 10, դեմ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Հին Խնձորեսկ» պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտու տարածքում գործող չորս հանգստի գոտիների հետագա շահագործմանը և պահպանմանը՝ հաշվի առնելով տեղական տնտեսավարողների կողմից դրանց երկարատև տարիների շահագործումն ու այդ գոտիների անհրաժեշտությունը զբոսաշրջիկների քաղաքակիրթ սպասարկման համար:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին՝ լիազորությունների շրջանակներում ՀՀ ԿԳՄՍ նախարարության քննարկմանն ու համաձայնեցմանը ներկայացնել այդ տարածքների հետագա զարգացման ծրագրերը, տնտեսավարող սուբյեկտների կողմից տնտեսական գործունեության ծավալման ու տարածքների վարձակալության առաջարկները:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2020թ. Դեկտեմբեր «02»

ք.Գորիս